



ԵՐԲՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 110

50 ՕԳՈՍՏՈՍ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿ՝ ՊԱՏՐԻԱՐԽՈՒՆԷՐ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ՄԵՐԱԳԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Երրորդ տարի 30 Օգոստոս 1913 Թիւ 110

«Մերագան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթ որ Գարդիկէ Աւճազանց շաբաթաբերքը շարունակէ Հայաստանի կարող իկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Մերագան Հայրն արտաքին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մէրի տէր Կաթի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թեղեան, Հայ Կարդիկէ Պատրիարք Կիլիկիոյ 21 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամարտ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԹԵՐԹԵՐՈՒ ԸՆԹԵՐՅՈՒՄ
(Շար.)

Շատ սխալ է ուրեմն մեր գաւառացի անկիւնք ու բարեհաւատ նամակագիրն այն սկզբունքը թէ՛ Արդար գաղափարն ընել կարենալու համար, ամէն ընդգիծալիք գրութիւններն ալ պէտք է կարդալ, որ եւ իցէ գոյնէ ալ ըլլան»։ Ինչպէս բարոյից ու սրտի մաքրութիւնը անարատ պահելու համար թող չի տրուիր պարկեշտութեան հակառակ ու է խօսք ու գործ, նոյնպէս մաքի ու հաւատարեաց հաստատութիւնը չխախտելու համար քնուտ ներքի չէ, նոյն իսկ առ ի փորձ, չար կամ կասկածելի ընթերցումներով զբա-

ղիւ։ Կարգի պէս փափուկ է սիրտը. չուշանի չափ մաքուր պէտք է մնայ միտքը. ու է հպում, նոյն իսկ անմաքուր շունչի մը, իսկոյն կը խամրեցնէ, և աւանդ, շատ անգամ յաւէտ անդարմանելիօրէն։

Եւ զարմանալի է մարդու ի չարն միտութիւնը. — ա՛յնքան բնածին է՝ արմատէն սկսած փտութիւնը, աղբերակնէն ապականուած հոսանքը, մարդկային փրկութեան ահաւոր անկումը, եւ՝ հեռեւարար, փրկագործութեան անհրաժեշտութիւնը։ — Այս վատթար միտութեամբ կը պատահի որ եթէ փոքր ինչ թողտուութիւն ըլլայ, այլ եւս ընտելութիւնը կը սահի կ'երթայ ի չարն. փոխանակ բարին ալ կարդալու, անպատճառ գէշը կը կարդացուի. բարին ձանձրոյթ կ'առնէ անպատճառ. այլեւս հարկւրներով կը բռնանին չքմեղանք՝ գէշ թերթերու, և ամբողջ անտանտութիւնը՝ բարիներու մասին։ Լուրջ

դիտող մը կ'ըսէր վերջերս . «Ոճրագործներու թիւին աւելնալու պատճառներէն մին է գէշ գիրքերը . թերթերը կարգաւ . . . Եւ ցաւալի է որ այդ գիրքերը ու թերթերը հազուապիւտ չեն . և պիտի համարձակինք ըսել թէ անոնց մեծագոյն մասը անբարոյացուցիչ են» :

Ուստի կարելի չէ թոյլ արուի գէշ թերթերու ընթերցումը՝ ու և է պատճառանքով : Պօղոս Առաքեալ կ'ըսէր . Մի՛ խաբուիք, գեթ խօսիքը կ'ապականեն բարի վարքը : Ո՛հ, ի՞նչ պիտի ըսէր արգեօք եթէ տեսնէր այս գիրքերը, այս վէպերը . ի՞նչ անաքեմանք պիտի կարդար անոնց դէմ : Մարգս Եղեմի դրախտին մէջ կորսուեցաւ՝ — իր ապագայ սերունդովը, — անոր համար որ, հակառակ աստուածային բացարձակ պատուիրանին, ուզեց մօտենալ ու ճաշակել բարւոյ ու չարի գիտութեան ծառէն : Հիմա մանաւանդ պէտք է չափ աւելի զգոյշ կենալ, հիմա՝ որ ընտանեացիս ի չարն միտող սրբտին ու մտքին համար՝ չարը աւելի յանկուցիչ ընելու ամէն արուեստ ի գործ կը դրուի . զբական պաճուճանք, ազգասիրական հոսանք, աժսն վաճառում, ապահով պաշտպանութիւն, արտաքին սեթեւեթներ, որոնք ստէպ կը քողարկեն աղանդաւոր, անկրօն, անիշխանական, որմնադրական խակ ողի, քանդիչ մարդկեղէն ընդերու թեան, առաքինութեան ու երջանկութեան ու մտքի վաւերութեան : Վերոյիշեալ լուրջ քննադատը կ'ըսէ որ, եթէ ընթերցողները դիտանային ըստ կանոնի, այսինքն՝ կարեւորը, պատշաճը, օգուտը, գրողներու շահախնդրութիւնը են . քաջ խորհելով և ողջմտութեամբ կարդալ, «Ո՛չ միայն անհամ և լպիրշ գրուածներէ զգուանքով պիտի խորշէին, այլ ևս ապահովաբար վերջին քանի մը տարիներէ ի վեր մեր հասարակութեան ամէն խաւերուն, մանաւանդ մեր երիտասարդներուն մէջ, գիրքերու և թերթերու միջոցով տարածուած սխալ ու մտտի կարծիքները, փուճ ու վատ գաղափարները, մեղսակար ու անբարոյացուցիչ գաղափարները, չփորձուած չհաստատուած վարդապետութիւնները այս աստիճան չպիտի ծաւալէին» :

Ստոյգ է որ ուղիղ դատաստան ընելու համար պէտք է երկու կողմն ալ լսել, բայց օրինաւոր դատաստանի մեջ, այսինքն ի պատշոնե եւ ի պարսոց, կարելու գիտութիւնն ու փորձն ունենալով . մտքի օրինաւոր դատաստանն ալ պէտք է միեւնոյն պայմաններով օժտուած ըլլայ իր դատաստանը ընելու, լծիորը աալու համար, պարսք, պատշոն, գիտութիւն, փորձ : Եւ այս դատաստանը, ո՛ւշ գրէ՛ք, կրնայ զբաղիլ մարդկային կարծիքներու շուրջը միայն, ըլլայ փիլիսոփայական, ըլլայ ընկերական . ան ատեն վէճը կը լուսաբանէ, հակաճառութիւնը օգուտներ յառաջ կը բերէ . չփութէն կայծ կը ծնանի :

Բայց երբ խնդիրը ստուգութեան վրայ է և ոչ թէ զկարծելեաց, այն ատեն դատաստան ընելու պաշտօն կամ առանձնաշնորհում սորուած չէ բնաւ որ և իցէ անհատի . Եկեղեցւոյ զանձարանին կը վերաբերին այդ յայտնեալ և ստոյգ վարդապետութիւնները, որոնց նա միայն է պահապան ու մատակարար . անհասներուն կը մնայ ո՛չ թէ քննադատել կամ դատել, այլ անպայման հնազանդիլ անոնց, եթէ կ'ուզեն մնալ անկեղծ հաւատացեալներ : Բողոքականներու, ազատամիտներու, արդիականներու, համազգայնականներու թշուառ օրինակները բաւականէն աւելի դաս կրնան ըլլալ անդգոյշներուն :

Այս պարագաներու մէջ, լսել նաեւ միւս կողմը՝ 1. Անօգուտ է . որովհետեւ եթէ մերը ճշմարիտ է, ինչպէս համոզուած ենք, պէտք է կենանք հոն անստատան . ճեմարիսը մէկ հատ է, ուստի անոր հակառակը անպատճառ սխալ է . ի՞նչ օգուտ կրնայ ըլլալ ուրեմն սխալը լսելէն : Երբ գիտես որ ստուգութիւն ունիս, հակառակը անդոյլն և ոչ կը լսես . օրինակի համար՝ երբ նստած ես, և մէկը գայ քեզի ըսէ թէ դու կը քալես, ի՞նչ կ'ընէիր . . . 2. Վնասակար է . թոյնի հետ, մեղանի հետ խաղալ չըլլար . դեղը չատ անգամ չ'ազդեր . բայց թոյնը՝ միշտ . իմաստուններն անգամ, առաքինիներն անգամ փորձութեան առջեւ կը սարալին, և վաղեմի մայր ծառերն անգամ կը տապալին . ի՞նչ պիտի ըլլան նորաբոյո տունկերը, աղածրի մանկունք ու մանկա-

մարդեր . թերուս , անսիրտ , աննկարագիր
փոքրիկունք՝ որչափ շուտ կրնան գայթակ-
ղիլ : Դէշ թերթերն ալ նոյնչափ թունաւոր
են որչափ գէշ վէպեր , բովանդակ , մանա-
ւանդ մեր միջավայրին մէջ , ուր չկայ օրի-
նաւոր դատարարականութիւն՝ մտքի և սրտի
ու բարոյից , ո՛չ առանին ո՛չ վարդապետն .
մինչդեռ հակառակ օրինակներ կը հեղեղեն՝
անհաւատութեան ու հերեպախութեան այս
խառնաշփոթ մարկայից մթնոլորտին մէջ : —
Յ . Յանդգնութիւն է . այդ գրութեանց մէջ
կը բովանդակուին քիչ թէ շատ գէշ բաներ ,
հակառակ կաթողիկէ ճշմարտութեան , որոնք
զօրութեամբ կամ գրականապէս , դատաւար-
տուած են Եպիսկոպոսներէն , Կաթողիկոսնե-
րէն , Ս . Քահանայապետներէն , այսինքն օ-
րինաւոր և առտուածադիր դատաւորներէն .
վերաքննել անոնց դատաւարանը . . . ուր կ'եր-
թայ տոոր ծայրը . կրնա՞ն հասկնալ այդ չա-
րամիտներուն բոլոր արուեստակեալ իմաս-
տակութիւնը . պէտք է Փիլիպպոսին՝ Ե-
թովպացոյ Կանդակայ աշկնոջ ներքինեւոյն
ըրած հարցումն ուղղել նաեւ այսպիսիներու .
Գիթե՞ս աւղեօք զոր քերեմուցուսդ : Ան պա-
տախտանց . Ջիսմեդ կարիցեմ . երե ոք ոչ
առաջնորդեսցէ ինձ : (Գործ . Է .) Առաջնորդը
Եկեղեցին է . անոր դատածին , վճռածին ու
ըսածին անպայման հնազանդինք :

Այդպիսի թերթեր կարգացողները չեն մը-
տածեր դժբախտաբար թէ ատիկա քաջալե-
րութիւն է նաեւ անոնց հեղինակներուն եւ
գործակցութիւն է անոնց փնասարեր ծաւա-
լումին . մինչդեռ կաթողիկէ թերթը թողլիք
կ'ընեն և առոր համար անոնք ալ նիւթական
միջոցներէ վուրկ մտաւով , չեն յաջողիր : Հա-
մոզումն նկարագրի տկարութենէն կը ծնանի
այս ամէնը : Ինչո՞ւ Եպիսկոպոսի պիղծ հորե-
րու ջուրին ա՛յսքան ցանկութիւն . ցամքած
են Սիոնի աղբիւրները :

(Շարունակելի)

ՄԱՀԱՅՈՒ ԿԻՒՆԱՀ

(Տեվամի)

... Էֆէնտի վարդապետին եանընա կիթ-
մէք իւզրէ էվտէն չըգաղընսա տիրի կէօզ-
լիւ . ուզուն պոյլու , էամէր բէնկլի օրթա
խըամէթէխի Մէլիա սալօնը սիլիօրսը : Պու
գատուն սալօնը թէմիլլէմէքսէն չօք հազդ
խտէրտի , չիւնքի օրատա խթէալիլի գատար
այինէյէ պագապիլիրտի :

Էֆէնտի պազէն գարըսընա՝

— Պէսլէմէն բէք թէնպէլ տիր , տէր իտի :
վէ գարըսը տա՝

— Իշի թէմիլլ Եաքար օլտուղունտան
տըր քի կէճիքի , ճէվապընը վէրիւտի :

Էֆէնտիին չըգաղընը անլար անլամազ ,
Մէլիա եավաշճա էֆէնտիին եազըխանէսինի
աչար գարույա կիտէր , խաֆիֆճէ գարույը
չալար :

— Ճէվապ Եօգտըր տըր . . . սիւքիւթ
իթմէք գապուլ իթմէք տէմէք տիր . . . :

Իչէրի կիրէր , տօղրու մասայա կիտէր .

— Տիւնքի կազէթայը նէրէյէ գօմուշ օ-
լապիլիւր աճէպա . . , տիւն միւսաֆիրիմիլ օլ-
տուղունտան իշթէ պիր կիւնլիւք թէէխիւր-
տէյիւմ . . . :

Պիր աղաճըզ արատըգտան սօնրա .

— Իշթէ պուլսում , պէօլիւք տէֆթէրին
ալթընտա իմիշ :

Էյիճէ թէտղըզ իտէրէք

— Սօնրա թէքրար գօյապիլմէք իչիւն
իյիճէ պագամալը տըր , տէր :

Կազէթայը ալըր , թիւյտէն թօլ ֆուրչա-
սընը գօլթուղունըն ալթընա գըստըրարագ ,
քիւչէաէքի սէալիլին իւզէրինէ օթուրուր :

— Օհ , նէ տէ եուճչապ տըր :

Փուրչայը ետրէ աթար վէ պաչլար օլու-
մադա :

— Հէլէ շու հէր կիւնքի օլուտուղըմսա-
հիֆէյի պիր կէօզտէն կէչիրէյիւմ , պագալըմ
եկնէ «մօաէրնիթ բանադրանք» սէրլէվհատը
ալթընտա եէնի պիր չէյ վար մը տըր :

Պէօլիւք պիր մէրազլա կազէթայը օլու-

տուղը վազըթ , չէհրէսինտէ կարիպ ալամէթ -
լէր կէօրիւնիյօրտը .

— Զէվալը ծնունդը Պիոս !... նէ ազլա
խրոմէթ իտիյօր պիւմէղսին... Հէմտէ իւմէ
Ֆէննէ դարչը չըզմագտա նէ մանա վար
տըր... Անլայօրըմ , կէօրիւյօր քի մէսէլէ
իշինէ կէլմէյօր , բէք էյի իզա՛ իտիւմիշտիր ,
օ վազըթ Քիլիսա ճէզալարընըն սիւահնա
միւրաճաթ իտիյօր... Եսվաշ , սուֆրա-
յա օթուրուր իսէք , պու հիքայէյի իսթիյար
Նանէթէ նագլ իտէյիմ , պիլիբիմ քի զըզաճագ
տըր , Ֆագաթ զարարը եօգ տըր , էյլէնիբիզ
պիր բարչա :

Սահիֆէյի չէվիւմէք իչուն կազէթայը
պիւքմէքտէ իքէն , քէնտի քէնտինէ :

— Էյէր պիզիմ Նանէթ ճատըսը , հէր կիւն
էֆէնտինին կազէթասընը օգուսուշ օլսա ,
օ վազըթ քահանալարըն նէ օլտուզարընը
բէք էյի անլարտը , տէր :

Պիրտէն պիրէ նազարը տիզգաթընա «եվ-
լասընըն հայարընա սուշի գաս» իւնվանը
ալթընտա պիր պէնտ չարբար :

— Տօղրուսը . պու կազէթա ախլագա
տայիր տէ չօք մալիւմաթ վէրիյօր , տէյէրէք
իքի սիւթիւնըզ պու մէզմուս Ֆէճիայը եու-
տարճասընա օգուր :

— Հէր հալտէ պուսըն պիւմէք Ֆայիտէտէն
խալի տէյիլ տիր... քիմ պիլիր եարըն պէ-
նիմ պաշըմա տա նէլէր կէլէ պիլիր :

Մէլիա , պէօյլէ պիրէր պիրէր պէնտլէրի ,
մէգալէրէրի օգույարագ տէվում իթմէքտէ վէ
րօման զըսմինա ելթիշմէքտէ իտի : Բօմանըն
իւնվանը Սարը սաշլը Սիւզօն իտի :

Պու նիւմօրէտա , տահա հիչ պիր ֆըզրա-
սընը գաշըրմամը օլտուղը պու րօմանըն
տէօրտիւնճիւ զըսմընըն եիրմի ալթընճը պա-
պը միւնտէրիմ իտի... Էֆէնտի հէր սապահ
քէնտի սըհի ճէվէլանընա չըգարտը... Մա-
տամ իլէ մատմաղէլ տէ անճագ գահվալթը
վազթը աշաղը էնէրլէրտի... Իշթէ պու
ֆըրսաթլարտան պիլիաթիֆատէ Մէլիա քէյ-
ֆինէ կէօրէ րօմանը օգույարալիլիրտի...

— Եօգ , շու Սիւզօն բէք էյլէնճէլի տիր :
Տուր պագալըմ պու տէֆա տա սէվալիլինի
թէրք իտէճէք մի...

Ֆիքրինտէն սայարագ

— Պու տէօրտիւնճիւ մուաշագասը օլա-
ճագտը... ախ . նէ կիւզէլ շէյ :

Պատէհու պիր գաշ ալիմեալար տա օգու-
տուգտան սօնրա ,

— Սիւզօն , բէք հագգըսըն... էվլէթ
նիքհա՛ ազըսըզ պիր պէնտ տիր՝ տէր , վէ
Սիւզօնըն ազընտան եագըլմըշ օլան շու քէ-
լիմէլէրի օգուր :

— Կէօրիւյօրմարըն , սեվսիյիմ , հէր սիւրլիւ
սաասէք պէնսի մեվհուս սր . հէնուզ կէնն վէ
կիւզէլիմ . պէնի իզան իսէնէֆ Գիչ պիր պէնս
իլէ մէրպուք սէյիլիմ . հէր ֆես պանա հիւր-
մէք վի հաքթա բէրէսիք պիլէ իքմէֆէ սիր ,
իքթի պուսլարըն ֆեաֆէսի իսէ , պիր գայթ
իլսիյարի իլի , Գիֆեանըզ , իսքէսիյիմ ֆիմ-
սէյի սեվեալիլիմիմ սեմէրէսի սիր !

Պու իպարէլէր պիր արա Մէլիայը տիւ-
շիւնտիւրտիլէր... օ , քէնտի քէնտինէ տէ-
յօրտը քի ,

— Պէն տէ կէնճ իմ... պէն տէ կիւզէլ
իմ...

Պու իսիւեալար արասընտան միւսթագ-
պէլին թաթլը վէ խօշ ալէմլէրիի թէխայ-
եիւլ իթմէքտէ իքէն... գաբու աշլըր...
— Էֆէնտիմ :

Մէլիա պիր սիւքինտի... Ֆագաթ օտա-
տան չէքլմէյէ իմքհան եօգտը... սայադա
գալգտը վէ կազէթայը արգասընտա կիլլէյէ-
րէք սէտիրին իւզերինտէ , թիւլ ֆուրչայը
էլլինէ ալտը , ալթէլ կիպի գըզարմըշ տուրտու
գալտը...

Ազ էվլէլ , վարգապիտէ , օտասընա հիչ
քիմնէ կիրմէզ , քէնտինին կազէթասընը քիմ-
սէ օգուսագ եօլու իտտաա իտէն էֆէնտի ,
պիր միւտտէթ շաշքըն շաշքըն պագալըտան
սօնրա , միւհիյպ պիր սէս իլէ ,

— Մէլիա , պուրատա նէ՞ եարըյօր իտին ,
տէր :

Մէլիա հիչ թավընըն պօզմագաղըն՝

— Էֆէնտի , բէտէրիմին տէյիրմէնճի օլ-
տուղընը պիլիրսինիզ , իշթէ պու սէպէպտէն
ուսըն կիւնլիւք ֆիյաթընա պագալըյօրտըմ ,
ձէվապընը վէրիր :

— Պէն սանա եասագ իթմիշտիմ քի...

— Պու կիւն լասթիք կիւնմիշ օլտու-
ղնըզտան, կէլտոյնիզի իշտէմէտիմ...:

Եաւաշնա սալօնա սիւլիշիր:

Օրատաքի ալինէյէ պազըպ տա սուրաթը-
նը կէօրիւննէ:

— Լալէ կիպի տէ գըզարմըշմ, տէր:

Վէ քէնտինի շէօլէ պիր Թօբլայարագ,
շու սուրէթլէ տիւշիւնիւր:

— Հէմ, պանա պիր շէյ տէմէյէ հազըզ
եօգ տըր... քէնտի կիպի պիր գաթօլիյին հէր
կիւն օգուտուղը պիր կազէթայը կէօզտէն
կէշիրմէքլէ նէ խաթա իթմիշ օլտում... պէ-
նիմ իշուն նէ պատար դարարը իսէ, քէնտի-
սի իշուն տա ալին տէրէնէտէ զարարը տէ-
յիւմիտիր...:

* *

Էֆէնտի մասաւր պաշնա օթուրաւ,
Հիտուլթ ու զազապ իմա իտէն պիր թաւր
իլէ պալէմի էլինէ ալարագ, քէնտի քէնտի-
նէ:

— Պու քահանայար, տիւարլար արգա-
սընտան տա կէօրէնէք կէօզլէրէ մալիք տիր-
լէր...:

Տէյէրէք՝ կազէթաճըյա պիր մէքթուպ
կազտը քի քէնտինին ապօնրմանընը օ տա-
պիգատան իթիպարէն քէնտին:

Միւհիւրլէտի, ատրէսինի եազտը, բուլը-
նը տա կաբշտըրաղտան սօնրա,

— Մէլիա՛:

— Էֆէնտի՛մ:

Մէլիա տէրհալ սալօն պարուսընա կէ-
լիննէ:

— Պանա պապ, հէման շիմսի կիտէր շու
մէքթուալը լուսթայա պըրազըրսին: Պուստան
պէօլէ պէնիմ խանէմտէ հիշ պիր քիմսէ ֆէ-
նա կազէթա օգուտայաճագ տըր:



ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՑ ՎՐԱՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ (*)

Ե.

«Նայէ որ մարգաւթը բլլաւ,
«հանդիսկատար, քաղցրաբար»
«հեզ, բարեկիրք եւ բարեմոյն,
«եւ պիթի բլլաւ սիրելի»:

(Շար.)

Ով որ ալ բլլաւ, ազնիւ ընթերցողդ իմ,
որ խիստ և բուռն բնաւորութիւն մը ունիս,
այս օրինակիս հետեւէ: Բանի մը մի խնա-
յեր հոգւոյդ և շարժմանցդ քաղցրութիւնը
ձեռք բերելու համար: Թէպէտ եւ ասիկա
քիչ մը դժուարին է, սակայն երբէք սուղ
չէ ատոր զինը, երբ ատկէ հետեւելիք օ-
գուտներն անգին են: Բան քաղցր, կ'ըսէ ի-
մաստունն, բազմապատկէ զբարեկամս եւ
կակղացուցանէ զբեմամիս (Եկդես. 2. 5).
Եւ կը յաւելու. Որդեա՛կ իմ, եւ ամեն գոր-
ծերուդ մէջ քաղցրութիւն ցոյց տուր, եւ ա-
ւելի պիտի սիրուիս քան թէ մեծամեծ գործեր
ըրած բլլայիր: Նրանի՛ հեզոց, կ'ըսէ Տէրն
մեր Յիսուս Քրիստոս, զի նոքա ժառանգեա-
ցեն զերկիր (Մատթ. 5. 5). Եւ ինչպէս
չժառանգեն երբ քաղցրութիւնը ընկերու-
թեան վայելքը եւ կենակցութեան վայելչու-
թիւնն ու հրապոյրն է: Քաղցրաբարոյ մար-
դը կը սիրուի, կը վնասուի, ամէնքը կը
փափաքին անոր հետ կենցաղավարել: Կը
փախչին, ընդհակառակն, այն մարդէն որ
խիստ, բուռն, հրամայական կամ անողոք
նկարագիր մը ունի: Եւ երբ մարդ ուրիշները
իրմէ փախցնելու կը հասնի, ինքզինքը ար-
համարհելի ընելու շատ չ'ուշանար: Թէպէտ և
դաժան ու ցասկոտ բնաւորութիւնը գրեթէ
միշտ մարդուն կազմածքէն և արիւնէն առաջ
կու գան, այսու ամենայնիւ մարդուս իշխա-
նութեան նուազ ենթարկեալ չեն, խելքը և
շնորհքը անոր կ'օգնեն: Եթէ աւելի դժբախտ
քան թէ յանցաւոր բլլայիր, այն բանը ո-

(*) Տես թիւ 406, էջ 489.

բուն վրայ որ կը գանգատին մարդիկ, քու այդօրինակ անախորժ ընտրութեամբ ծնած ըլլալդ չէ, այլ մարդկանց ոխերիմ թշնամի աշդպիսի հիւանդութիւն մը ունենալով հանդերձ, դարձեալ մարդկանց հետ ապրիլ ուզելդ է. Այդպիսի ժանտախտ մը սրտին մէջ կըրելը ամենամեծ դժբախտութիւն մըն է, առիկա ընկերութեան, քու սրտածնիւզ գործադրութեան և քու սպասարկութեանդ մէջ մտցնելը ոճիր մըն է. Բանի որ ուրիշ մարդիկներու հետ ապրելու և անոնցմէ նեղութիւն կրելու սահմանուած է, քողցրութիւն և համբերութիւն ստանալու և իր սաստկութեան և բարկութեան ժայթքումները զսպելու համար՝ մարդս որչափ ալ ճիւղ և ջանք ընէ, երբէք չառ չէ. Ասոր սքանչելի մէկ օրինակը ունինք Գաղղիոյ թաղը կրած կարի մեծ իշխաններէն միոյն անձին վրայ. Գրիչյոն իրեն դէմ եղած յանդիմանութենէ մը ինքզինքը արդարացիաբար համար, Հենրիկոս Դ. թագաւորը տեսնելու եկած ըլլալով, չքմեղանքներէն անցաւ վիճաբանելու և հակառակելու և ասոնցմէ ալ բարկութեան. Թագաւորը բարկանալով, հրամայեց իրեն որ դուրս ելլէ. Եւ որովհետեւ Գրիչյոն անգաղար դռնէն նորէն թագաւորին քով կը դառնար, նոյն ոճով խօսիլը շարունակելով, ներկաները տեսան որ թագաւորը բարկութենէն կ'ալլապուռէր. Վախնալ սկսան որ չըլլայ թէ իրենցմէ միոյն սուրը իսկուով անոր վրայ յարձակի և զարնէ. Թագաւորը ինքզինքը զսպեց, եւ երբ Գրիչյոն ելաւ գնաց, իրեն քով գտնուող իշխանաց զառնալով, որոնք իրեն համբերութեան վրայ կը սքանչանային, ըսաւ անոնց. Բնութիւնը զիս բարկացոս ըրած է, բայց խելս հասնելի ի վեր միտ զգուցացած եմ կրիք մը, որուն անսալը վրձանգաւոր է. փորձառութեամբ զիսեմ քեզար խորհրդաւոր մըն է եւ Եւս գոն եմ իմ չափաւորութեան յաւ վկաներ ունենալու համար:

Եւ արդարեւ բարկութիւնը խրոխտ և չար տէր մըն է. Միշտ զէշ կերպով կը վարձատրէ իրեն հնազանդողները, և իր տուած վնասակար խորհուրդները կարի սուղ կը ծախէ:

Ո՛րչափ և որպիսի ամօթալի, անարժան եւ երբեմն անդարմանելի ծայրայեղութեանց մէջ չի գահավիժեր զմարդ, որոնց կը յաջորդեն խղճի դառն խայթեր. Աւելի հանճարեղ և զգոն մարդիկները, և կամ զանոնք որոնք իրենց աստիճանաւ և ծննդեամբ աւելի լաւ զգացումներ ունենալու պարտաւոր էին, կը մղէ ըսելու և գործելու շատ մը բաներ, որոնք միշտ կը նուաստացնեն զիրենք, և յաճախ կ'անպատուեն. Դեմոստոս փիլիսոփան տեսնելով Լակեդեմոնացի մը, որ իր գիրին կը չարչրկէր. Դադրե՛ այդ գերիին նմանելէ. ըսաւ իրեն:

Բարկութիւնը թերեւս ամէն բուն կրից մէջ նոյն իսկ մարմնոյ առողջութեան աւելի վնասակար է. Ոչինչ կրնայ այնչափ խանգարել առողջութիւնը, որչափ բարկութեան շարժումները որ արիւնը կ'ապականեն, հիւթերը վեր ի վար կ'ընեն, կազմուածքը բուրովին կ'ալլալեն և գահավիժաբար կը տանին ի գերեզման. Ursusուքիւն, կ'ըսէ Ս. Գիրքը, նուազեմ գաւուրս (Եղեւ. Լ. 26):

Վաղենախնիանոս Ա. կայսրը, որուն ձիրքերը գովեստիւք կը յիշատակէ պատմութիւնը, և որ չունամամանի մը որդի, իր քաջութեամբը մինչեւ կայսրութեան բարձրացած էր, տխուր գոհ եղաւ բարկութեան յաճախակի շարժմանց, որոնց ինքզինքը կը թողուր, և զորոնք զսպելու ամենեւին հոգ չէր ընէր. Կաղաց զհապանները օր մը իր ներկայութեան ընդունելով, ա՛յն աստիճան սաստիկ բարկացաւ որ արիւն փսխեց և մեռաւ. Ո՛րչափ սարսափելի է այդպիսի վայրկենի մը մէջ գերազոյն դատաւորին աստանին ներկայանալ, իր ամէն բարկութեանց վրայ հաշիւ տալու համար:

Բարկութեան ենթակայ եղող անձինք՝ զայն ուժգնութիւն կամ սաստկութիւն կը կոչեն. բայց ի՞նչ հոգ թէ ասոր ինչ անուն կը տրուի, երբ այդ ուժգնութիւնը գրեթէ միշտ տմարդութեամբ և բրտութեամբ կը վերջանայ, երբ առիկա յիմարութեան կամ կատաղութեան ծայրայեղութեանց կը տանի զմարդ, և մարդ մը կատաղի գաղտնի մը, ընկերութեան պատուհասի մը դարձնելով կը լմնայ:

Այսպէս ինքզինքը զսպելը քիչ մը դժուար է, ըստ երբ մարդ մը կը ջանայ իր կրքերը նուաճելու, անոնց սաստկութիւնը կը մեղմանայ. որոնք ընտանիքի և ընտելացած կենդանիներու պէս կ'ըլլան, որոնք մեզի հետ կը բնակին և հանդարտ կը կենան:

Մի՛ վհատիր ուրեմն, եթէ հակառակ այն ամէն ճիգերուն, զորս մինչեւ հիմա ըրած ես, չյաջողեցար տակաւին ընկճել քու խիտ և ցասկոտ բնավորութիւնդ: Եթէ երբէք իյնալ ալ պատահի, ընդդիմացած ըլլալը միշտ օգտակար եւ պանծալի է: Ամէն յաղթանակ իր վարձատրութիւնը ունի, և երբ, կիրքը հանդարտելով, պաղարիւնով եթէ մտածուի թէ մինչեւ ո՞ր կրնար զմեզ տանիլ այդ կիրքը, կարի քաղցը միտքարութիւն մըն է թէ, չէ կարողացած մեզի բանականութեան և իմաստութեան հակառակ բան մը գործել տալ:

Թարգմ. Ն. Ծ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

(Շարունակելի)

ՀԻՆ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹԵՐ (*)

Բ. Նամակ

Մատեն 45, Պողոս Բաղնայայեցի Ե. յամին Թ. Նամակ 124, էջ 41:

Սիրեցեալ Որդւոյ Պատրիարքական Փոխանորդի Կ. Պոլսի:

ՊՕՂՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՀԻՆԳԵՐՈՐԻ

Սիրելի՛ որդեակ, ողջոյն և Առաքելական օրհնութիւն: Մեր այս նաժարը քեզ պիտի յանձնէ սիրելի որդին մեր Զաքարիա վարդապետ հայազգի, զոր շատ պատճառներու համար կարի յոյժ կը սիրենք ի Տէր: Ասի տեղեկացուց մեզ որ քիչ առաջ՝ միաբան հաւանութեամբ եպիսկոպոսներու, քահանաներու և ժողովուրդեան, տեղդ գտնուող իրենց Ազգին Եկեղեցւոյն վրայ առաջնորդ կարգուած է: Եւ որովհետեւ այն եկեղեցական վարչութեան մէջ ի փառս Աստուծոյ մեծ շահ և օգուտ կ'անկնկալենք անոր բարեպաշտու-

թեան ու խոհմութենէն, կը փափաքինք անոր նպատաստանայց ըլլալ այն ամէն բանի մէջ զոր Տերամք կրնանք ընել: Ուստի կը յանձնարարենք քեզի որ կրցած օգնութիւնդ փութով ու սիրայօժար մատուցանես իրեն. որպէս զի սիրոյ այն կապը՝ որով այս Ս. Աթոռոյ կապուած կը փափաքինք պահել Հայերը, մեր այս սիրելի որդւոյն ջանքովը՝ ինչպէս վստահ ենք, աւելի եւս սեղմուի ու զօրանայ. և մենք հայրական սիրով կ'օրհնենք զքեզ:

Տունալ ի Հոռն, առ Եկեղեցւոյն Սրբաւոյն Մարիամն Մատու յորհորջելոյ, ընդ մասնաւա Ձկնորսի, յժԳ. Կաղանկից Նոյեմբերի (20 Հոկտ.) 1613, Բաղնայայեցեալեան սեռոյ յիմներորդում ամի:

Բ. Նամակ

Մատեն 45, Պողոս Բաղնայայեցի Ե. յամին Թ. Նամակ 124, էջ 41:

Սիրեցեալ որդւոյ առն՝ Ազնուականի, Դեսպանի ամենաբխտոնեայ արքային ի Կ. Պոլսի քաղաքի

ՊՕՂՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՀԻՆԳԵՐՈՐԻ

Սիրելի՛ որդեակ, Այր Ազնուական, ողջոյն և Առաքելական օրհնութիւն: Մեր մեծարոյ եղբոր Մելքիսեդեկի՛. Հայոց Մեծաց Պատրիարքին մեզի զրկած պատուիրակը՝ սիրելի որդին մեր Զաքարիա վարդապետ, տեղեկացուց մեզ որ, անցեալ տարի, երբ Հոռն մէն կը վերադառնար ի Հայաստան, Կ. Պոլսի հասնելով, եպիսկոպոսներէն, քահանաներէն ու ժողովուրդէն առաջնորդ կարգուեցաւ այն տեղի իրենց եկեղեցւոյն վրայ. հոն ան ատեն առաջնորդ եղող Գէորգ¹ անուն մէկը վտարելով, որովհետեւ հաւատացելոց ամենամեծ գայթակղութեամբը թուրքերու մատնած էր այն մեր սիրելի որդին Զաքարիան՝ իբր լրտես Պարսից թագաւորին կողմանէ զրկուած՝ պատերազմը վերանորոգելու համար: Յիշաւի յոյժ վը սիրենք Զաքարիան որովհետեւ մեր քով եղած ատենը ուղղա-

* Տես թիւ 407, էջ 507

¹ Արդեօք Գրիգոր... (Կեսաբացի) որ 1601-ին մինչեւ 1626 երեք տեղամ Պատրիարք եղաւ:

մտութեան ու առաքինութեան այնպիսի ապացոյցներ տուաւ մեզ, որ արժանապէս ու մեծապէս յինքն գրաւեց մեր հայրական սէրը: Բայ աստի, աստուածային ողորմութեան վրայ վստահելով կը յուսանք որ հոգ բնակող Հայոց եկեղեցւոյն համար իր վարչութիւնը շատ յարմար պիտի ըլլայ, մանաւանդ անոնց՝ Սուրբ Առաքելական Աթոռոյ հետ միութիւնը պահպանելու: Անոր համար այն ամէն բանի մէջ որ մեզի կարելի պիտի ըլլայ, արտաքին կը փափաքինք նպաստել իրեն: Եւ որովհետեւ կը ծանուցանէ մեզ որ քու պաշտպանութիւնդ շատ կարեւոր է իրեն, որ վասն քու Ազնուութենէդ ազդուօրէն կը խնդրենք որ մեզի արտաքին կարգի սիրելի եղող այս մեր զաւակը, մեր անձին ի մեծարանս, հովանւոյդ ներքեւ առնուս եւ անոր պաշտպանութիւնն ու ազանութիւնը ստանձնես, այնպէս որ քու օգնութեանդ ու ճոխութեանդ վրայ ապաւինելով յախստանի եւ ի խաղաղութեան կարենայ սպասաւորել իր եկեղեցւոյն: Այս դործին մէջ քու առ մեզ ունեցած որդիական մեծարանաց ամենահաճելի մէկ ծառայութիւնը մատուցած պիտի ըլլաս, որ եւ վայել պիտի ըլլայ քու բարեղաշտութեանդ ու կրօնասիրութեանդ եւ զոր մենք միշտ եւ հանապաղ պիտի յիշենք: Եւ քու Ազնուութեանդ յօժարութեամբ կը շնորհենք մեր առաքելական օրհնութիւնը:

Տուեալ ի Հոռոս առ Սրբոյն Պետրոսի, ընդ մասանկու Ձկնորսի, յժ.Գ. Կարսնոյից Նոյեմբերի 1613, Քահանայապետաբանս մերոյ յաւին իննկորոյի:

Մանուրէր-Խլ-Ազիզի Կ. Հայոց Օրհորդաց Վարժապետիքն այս տարուան ընթացաւորս օրհորդներէն մէկուն կողմէ յօրհնուած եւ անսպառնի հակդէսին մէջ արտասանուած է հետեւեալ փերուածը, զոր կը փոքրակէ հրատարակել որկողին փափաքին հատեմս:

ԵՐԿԻՐԱԽՈՐ ԱՔՎՈՐԻ

1. Թափառիմ երկրիս համբուն մէջ փրօս
Զայոց ձորիս մէջ ծրծեմ մահուան օդ
Ու կ'երգեմ ձայնով լացի, արտառաց
Երգ ամսորանաց:

2. Ո՛հ, երկիրն ամբողջ ինձ ամսոր քրի
Վաղանցուկ փառով ու հեռութեամբ լի
Ափիս մէջ զանոնց կ'առնեմ, կը զրննեմ
Ու կը հեծեմ:

3. Փառք ու մեծութիւն արդեօք ի՞նչ կ'արժէ
Աւելի ազնիւ եմ եւ ասոնցմէ
Հրակայ կանգնիմ վեր երկրիս փառքերէն
Որ դէմս կանգներ եմ:

4. Այս հոգիս որ միշտ այրի սիրով վառ
Հոգիս որ անգուս կըրծիս քրօնի յար
Ձէ՛, չի խոնարհիր գրեկէ ըստեր մի
Որ խաբէ անցնի:

5. Այլուր է, կը գգամ, հայրենիս այլուր,
Այլուր երագած սրբիս խնդ մահուր:
Հագիւ ելլելու պաղ զիմիս սառնէմ
Փողերն հրաւիրեմ:

6. Հոն քաղաւորէ բարիքն անխրոնդ
Որուն երկրորդ յոգնած քեւերով
Բայց հոս լոկ հեռուս գոչեմ արակեղ
Հայր, սիրեմ ըզեղ:

7. Թռչունն երգեցիկ առնելոյն նոյն,
Գլխացող առուակ վրձիս արեւէն
Կ'ըսեն ինձ երգով, հեւով մը մահուր
Ո՛ր է Աստուած, ո՛ր է:

8. Անունն է գրուած խոսերուն վրայ
Հայն գեփիւնն անպուլ մեղմիկ կը փրփապ
Եւ ծաղիկն այգուն ցողազարդ յրսակ
Երբ բանայ բաժակ:

9. Բայց երբ մայր բնութիւն մեծամայն գոչէ.
Ձիս բազուկն անոր հանց յաչէ.
Գործերն այդ ձեռքին, շենեմ բայց ձեռքն այն
Կը փրկուեմ ունայն:

10. Ու երբ լայն աստղեր երկնից կայանին
Շրջին օդոյն մէջ շողան ու փայլին,
Շողն ու փայլ շենեմ, բայց անոր երես
Դեռ չեմ շենեմ ես:

11. Ա՛հ... Ե՛րբ, Ե՛րբ արդեօք պիտի լուէ, ո՛վ Հայր,
Ցանկալի-սեփովդ սրբիս վերովայր
Ա՛խ, Բեզմէ հեռու, ի՞նչ վիշտ դառնահամ
Ի՛նչ ցաւ կը գգամ:

12. Արցունքով սրբէ, կ'ըսեն ամենն ալ,
Բաղձանքով մի օր կ'ընայ լրանալ
Շուտ մահկանացու անցնի կեանք մարդուն
Շուտ գալ իրիկուն:

13. Կ'անցնին ու կ'անցնին օրեր, տարիներ,
Ցաւով, ծանձնոյթով օծուն ու երեւ.
Բայց հիւժող սրբիս համար ժամանակ
Ա՛հ, չէ՛, չէ՛ արագ:

14. Ո՞վ կու տայ ինձ, ո՞վ, աղաւնոյ բէւեր,
Ինչո՞ւ վերէն ձայն, ձայն մ'իտկ չի հրնչեր,
Ի՛նչ ծագեց անա օրն բերկրաւար
Թող, եկո՛ւր, զաշխարհ:

15. Գահեռուն վրայ կամարին պայծառ
Ա՛խ իմ սիրելեաց հոգիք բազմին վառ
Հոգիք որ բրնձն քարէ մ'հառաչի
Տալով ինձ վերջի:

16. Մայրիկս ալ է հոն, մայրիկս անուակ,
Հոն փառհերու մէջ սուգուած է համակ
Եւ ինձի դարձած իր գահուն վրայէն
Կր ժպտի հեռուէն:

17. Դուն ծնցիս մայրիկ, բայց եւ որդեկին
Աչերէն աղի կայլակներ հոսին,
Ժպտիս երկնից մէջ, իսկ ես հոս անառ
Կու լամ ամէն օր:

18. Գարձո՛ւր, օ՛ն, դարձո՛ւր աչերոյ մայրական
Ա՛խ, մի՛ ձնըգեր զիս որք ախորական.
Կարօս յագեցո՛ւր, խնդրեմ մ'ուշանար
Չիս ալ եւ քո բովոյ առ:

19. Իսկ ես դեռ երկրիս վրայ բախտակոս
Պիտի դեգերիմ, ծրծեմ մահուան օդ
Ժուռ գամ երգելով ձայնի արսասուաց
Երգ անտրանաց:

31 Յուլիս 1913

ԼՈՒԻ ՎԵՕՅԵՕ

ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՄԵՋ (*)

Պարուններ,

Ինձի կը թուի թէ այս վայրկեանիս կը
քաւեմ երիտասարդութեանս մէկ յանցանքը:
Երբ ճարտասանութեան ուսուցիչ էի, ամէն

(*) Ինկիլէի նորինոր խմբագրապետ հռչակուող
Լոսինը կանոնիկոսին՝ պարզեւարաշխութեան մը հան-
դէսին մէջ արտասանած մէկ քանաթոսութիւնն է, զոր
կը գնենք հոս Այս ամիսի պատշաճ մը համարինք մեր
ընթերցողներուն մի քանի կենսագրական ծանօթու-
թիւններ ատը նկատմամբ Լուի Վեյեյեյի, մեծանուն
Մատենագրիկի և թունգ կաթողիկէին, որուն հարեւ-
րամակը տանելու կը պարտաւորուի կաթողիկէ աշ-
խարհը:

Լուի Վեյեյեյ ծնու 1813 Հոկտ. 14ին: Հայրը
տակաւագործ էր: Նախնական ուսմանը քննելը առ-
նելէ յետոյ, 19 տարեկան հասակին մէջ խմբագրու-
թեան սկսաւ Ծրանայի գաւառիկներուն մէջ: Իր քա-
ղաքական և կրօնական համոզուեցներէ թափուր,
բայց կծու յողումները ենթարկեցին զինքը շատ մը

բանէ աւելի ծանր կու դար ինձի պատժելը:
Թերեւս դուք կը կարծէք թէ աշխարհիս մէջ
զիր գրելու, ցամաք հոս ուտելու պատիժ-
ներուն ենթարկուելէն դժնդակ բան չկայ: Կը
սխալիք, ատոնց ենթարկուելը տանելի է. ա-
տոնց ենթարկելը մեծ տանջանք է: Եւ ես
երկրորդական ուսուցչութենէն հրաժարեցայ
պատժելու առիթ չունենալու համար:

Բայց նախախնամութիւնը այսօրինակ
տկարութիւններու համախոհ չըլլար: Եւ իմ
յանցանքիս քաւութեան համար կ'ուզէ որ
ամէն տարի այս միջոցին, ամա մատաղ ու-
սանողներու՝ դպրոցական տարուան ամենա-
ծանր պատիժը, ճա՛ն մը... հրապարակա-
խօսութիւն մը այն սեղանին առջև ուր չար-
ուած են պատկերներ և ոսկեպօծ մրցանակները...
քարոզ մը այն պահուն երբ վանդակը բաց-
ուած է և մատաղ ճնճղուկները կը ճուռողեն
աղաւ օդին և անսահման միջոցին քաշէ...:

մենամարտութիւններու 1830ին Հռոմ բնակ
ուրութիւնը զինքը կերպարանափոխ ըրաւ: Երբ Բա-
րեզ գարձաւ, իր ամբողջ ուժերը նուիրեց կաթողի-
կութեան շահերուն պաշտպանութեան, և շատ
կրօնական երկասիրութիւններ, յօրինեց: 1842ին Ալէ-
քիանի մէջ Պիւժօ զօրավարին քարտուղար եղաւ և
յետոյ Բարիզի ներքին գործոց նախարարութեան դի-
ւանապետ: 1843ին մատու Ինկիլէ Ռիթիէի խմբա-
գիրներուն մէջ, ուր շատ չանցած տառջին տեղը գրա-
ւեց: 1848 եղաւ իւր թերթին խմբագրապետ: Զաղ-
կեց ժամանակին փոխտպաներ, որոնց գէմ գրեց Լէ
Լիպոլ Բանետոն երկը, հարուածեց ուժգին ընկեր-
վարականներու յիշափոխական գրութիւնները և
Վոլգերական ու ամբարշտ մամուլին գէմ սկսաւ
մղել բուռն պայքար մը որ երբեք չդադրեցաւ: Լուի
Վեյեյեյ տմէն բանէ նախաձեռնող համարելով Եկեղեց-
ւոյ ազատութիւնը, միշտ անդիհեր պաշտպան հան-
դիսացաւ կաթողիկէութեան և Քահանայապետու-
թեան իրաւունքներուն, և ճակատադէպ հակառա-
կորդ՝ ազատական բնուած կաթողիկէից, որոնց գըլ-
խաւորներուն գէմ ազդուած են իր շատ մը յօդ-
ուածները: 1860ին Եկեղեցւոյ տէրութեան բռնա-
բարութիւն ընդդէմ դէմ ուղղած կորովի յօդ-
ուածներուն պատճառաւ Ինկիլէրը դադարման դա-
տապարտուեցաւ: 1863ին գրեց Հռոմի բոյրը, 1866ին
Բարիզի հոսերը: 1867ին երբ Ինկիլէրը նորէն սկսաւ
հրատարակուել, դարձեալ ձեռք առաւ իր սուր և
կորովի գրելը: 1869ին փեղեգրական ժողովին առեն
պաշտպանեց Պիոս Թ. ի դատար: Մեռաւ 1883ին մըշ-
տարդին կեանք մը ապրելէն վերջը:

Բարեխախտարար պահած եմ իմ երբեմնի ըզ-
գացումներս. երջանիկ զահիճ մը չեմ. և, եթէ
ինծի մոտիկ ընկու մտածումը մասնաւորապէս
կը խռովէ ձեր ուրախութիւնը, վստա՛ն ե-
ղէք որ այսպիսի օր մը ձեզի խօսելու մտա-
ծումը իմինիս վրայ բան մը չ'աւելցնէր. եթէ
կը հաճիք, դաշինք մը գնենք, դուք համբե-
րող եղէք և ես համառօտախօս... Թէ դա-
հիճին և թէ իր զոհերուն համար լաւագոյն
են կարճագոյն տանջանքները:

Ասկէ զատ ձեր նեղութիւնը նուազեցնե-
լու միջոց մըն ալ գտեր եմ. Այս է փոխա-
նակ բանախօսութիւն մը ընելու, պատկեր մը
ցոյց տալ ձեզի. Ի դուր պիտի ըսէք ինծի թէ
ձեր մէջէն ամենէն փոքրիկները իրենց հասա-
կին ներածէն աւելի խելացի են, և թէ ե-
րեցագոյնները արդէն իսկ ունին իրենց չըր-
թունքին վրայ վեհերոտ ստուերը այն բա-
նին որ—չնորայ օգնութեամբ—կրնայ ըլ-
լալ պերեւեշտ մը. երբեք պիտի չյաջողիք
մտքէս հանել թէ դուք պատկերները կը սի-
րէք, եւ երբ հարկադրուիք ընտրութիւն ը-
նելու քարոզի մը և նկարագրի (portrait) մը
միջև, նկարագիրը նախամեծար կը համարիք:
Ձեռք առնունք ուրեմն նկարագիր մը:

Կարդացի՛ք արդեօք լրագիրներուն մէջ...
—Թերեւս հարցումս անխոհեմական է, որով-
հետեւ ամէն մարդ գիտէ թէ ձեր ծրագիրները
կ'արգելուն թերթերու ընթերցումը — բայց
վերջապէս կարելի է որ դուք կը սիրէք վեր-
ջին շաբթու գրականութիւնը, և անկարելի
չէ որ, թէեւ ոճի մը ըլլայ այն, թերթե-
րուն մէջ կարդացած ըլլաք փառաւոր հարիւ-
րամեակի մը ծանուցումը: 1913 Հոկտ. 11ին,
ճիշդ դար մը պիտի ըլլայ որ այս տեղէն ոչ
շատ հեռու, Կաթինէ գիւղին մէկ տնակին մէջ
տղայ մը աշխարհ կու գար. Լուի կը կոչուէր
այս տղան որ օր մը պիտի ըլլար մեծ, հիա-
նալի և զիւցազն Լուի Վէօյեօն: Անոր դէմքը
հրապուրիչ չէր, ծախկախտէ ծակ ծակ եղած
էր այն, բիրտ գեղեցկութիւն մը ստացած էր:
Կին մը կ'ըսէր Լուի Վէօյեօյի, «Երբ մէկը
խօսքերդ լսէ... զքեզ տեսնելը կրնայ մոռ-
նալ»: Սակայն դժբախտաբար զինքը միշտ կը
տեսնէին: Բայց ի՛նչ փոյթ: Այս մարդը եղաւ

զինուոր մը, պետ մը, Աստուծոյ և Եկեղեց-
ւոյ առաջնորդ, եւ նախընթաց կռիւներուն մէջ
ամէնէն գերիշխան հանդիսացաւ. հոտակով,
ձայնով եւ իր ռազմապիտական հզօր շար-
ժումով:

Եւ թերեւս կարծէք թէ ես կու գամ
այս առտու ձեզի ընծայելու իր սուրը: Ո՛չ,
վստա՛ն եղէք. Առողջապահական յանձնաժո-
ղովը յայտարարած է թէ քանամնայ երի-
տասարդ մը չի զինուորադրուիր: Ձեր ամե-
նէն մեծերը գեռ տաանեւութը տարեկան չը
կան. Բարբարոս ըլլալու, է — երեսփոխանի
մը պէս բարբարոս—զձեզ զինուորագրել ու-
ղելու համար, հակառակ առողջապահութեան
եւ անոր պատուիրաններուն: Փոխանակ ը-
սելու ձեզի թէ Վէօյեօ ինչպէս կու եցաւ,
թո՛ղ առէք որ ըսեմ ձեզի թէ անկալ ինչ-
պէս կը հանգստանար: Ստորեւ այն պատկե-
րին զոր ձեզի խոստացայ ցոյց տալ, սա
